

բացատրութիւնները կը դնենք հոս նոյնութեամբ: «Վանքը շինուած է խոշոր քարերով, որոնց ուշադրութիւն դարձուցած են բոլոր ուղեգիրները. բայց եկեղեցիին սնարքը պէտք է գիտել աւելի ուշադրութեամբ: Հիւսիսային արեւելեան կողմը, անկիւնաքարի մը չափն է $1\frac{1}{2}$ մէթր երկարութիւն, 1 մէթր բարձրութիւն եւ 1,15 լայնութիւն եւ 5,000 քիլոկրամ ծանրութիւն. ստոյգ է որ անոր շուրջի քարերը այնքան մեծ չեն, բայց դարձեալ խոշոր քարեր են: Ներսի կողմը, կողակը պահած է չորս վիմաշարքեր, իւրաքանչիւրը 65 սանթիմէթր բարձրութեամբ եւ ոմանք ալ մէկ մէթրէ աւելի երկարութեամբ: Քարերը լաւ շարուած են եւ կցուածքները ա՛յնպէս կատարեալ են որ կարելի կ'ըլլայ բաղդատել զանոնք հոովմէական ա՛յս կերպ կառուցուածքներու հետ:

Կողակին մենախուցներէն (retrait) երեսին միոյն վրայ քանդակուած է քահանայապետին եփուտը, զոր արդէն ծանօթագրած են անգղիացի քննիչները, ինչպէս տեսանք վերև: Աւելցընենք թէ ինչ որ գիտողութեան արժանի է, սա է թէ այս փոքրիկ քանդակը առաջին անգամ կճակով ծեփուած վիճակի մէջ գտնուած է, ինչպէս նաև կողակին մնացեալ մասերը. և այս կճակը ծածկուած էր նկարներով: Արդ այս նկարները, պէտք է գիտել որ ամէնէն ուշ, ԺԲ. դարուն շինուած են, ինչ որ աւելի կը բարձրացնէ եփուտը ցոյց տուող քանդակին հնութիւնը: Եփուտը՝ հին քրիստոնէից կարծիքին համաձայն, կը վերաբերէր Զաքարիային: Յիշատակուած որմագրերը քանդակուած են քարի վրայ: Կողակին մէջ կը տեսնուին հայկական, յունական եւ լատինական հին խաչերու գծագրութիւններ, ամէնքն ալ գլուխուած են նկարներով զարդարուած կճակին տակ: Եկեղեցոյն կողմնակի պատերուն վրայ, կը նշմարուին իրարու վրայ եղած երկու ծեփեր, երկուքն ալ կը կրեն գունաւոր հետքեր, երկրորդը յայտնապէս զարդարուած է սրբոց պատկերներով: Սեղանին գրաւած տեղը շատ աւելի գրական հնութեան մը նկարագիրը կ'ընծայէ: Սեղանին հիմը, որ դեռ կը տեսնուի, 1,90 մէթր երկարութեամբ, 1 մէթր լայնութեամբ եւ 50 սանթիմէթր թանձրութեամբ կրային միակտուր քար մըն է: Այս քարին վարի մասը սկիզբէն հողին մէջ մտած է. ա՛նա թէ ինչպէս, սեղանը անընդմիջաբար կառուցուած է բարձրութեանը վրայ այն երեք